

Պայմաններ

1. Ընդհանուր դրույթներ

- 1.1. Բանկն Օվերդրաֆտ տրամադրելու որոշումը կայացնում է իր հայեցողությամբ՝ հաշվի առնելով վարկային հայտի համապատասխանությունը տվյալ վարկատեսակի հայտարարված պայմաններին, ինչպես նաև գնահատելով այնպիսի էական հանգամանքներ, ինչպիսիք են հաճախորդի վարկարժանությունը, վարկային պատմությունը և այլ հանգամանքներ:
- 1.2. Բանկն իրավունք ունի իր հայեցողությամբ դադարեցնել Օվերդրաֆտի պայմանագիրը և պահանջել Օվերդրաֆտի օգտագործված մասի և հաշվեգրված տոկոսագումարների ամբողջական մարում:
- 1.3. Օվերդրաֆտը տրամադրվում է անկանխիկ:
- 1.4. Օվերդրաֆտի դիմումը ընդունվում է Բանկի ցանկացած մասնաճյուղում և գլխավոր գրասենյակում:

2. Զգուշացում

- 2.1. Հաճախորդի կողմից տոկոսագումարների և վարկի գումարների մարումները ժամանակին չկատարելու դեպքում այդ մասին տեղեկատվությունը կտրամադրվի ՀՀ Կենտրոնական Բանկի վարկային ռեգիստր և ԱԲՈԱ Քրեդիտ Ռեփորթինգ ՓԲԸ:

3. Տուգանային տոկոսադրույք և տույժեր

- 3.1. Վարկի վաղաժամկետ մարման դեպքում տույժեր և տուգանքներ չեն կիրառվում:

4. Օվերդրաֆտի դիմումի մասին որոշման կայացման և վարկի տրամադրման ժամկետները

- 4.1. Օվերդրաֆտի հայտի վերաբերյալ վերջնական որոշման կայացման և Հաճախորդին որոշման մասին տեղեկացնելու ժամկետը-հաճախորդի կողմից Բանկի կողմից պահանջվող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, ներկայացնելուց հետո 2-5 աշխատանքային օրվա ընթացքում:
- 4.2. Օվերդրաֆտը հաճախորդին տրամադրելու ժամկետը - Օվերդրաֆտի դիմումի վերջնական հաստատումից հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում:

Թարմացվել է՝ 18/01/2019 12:00